

Մոմավառութիւն

Մոմի լոյսը կը խորհրդանշէ մեր հաւատքի լոյսը. Քրիստոսի գալուստով մեղքերու խաւարը եւ անհնազանդութիւնը չքացան եւ երկրի վրայ աստուածավախութեան լոյսը հաստատուեցաւ եւ ամենքս լուսաւորուեցանք Քրիստոսով:

Մոմավառութիւն

Եկեղեցի մտնելու ժամանակ գրեթէ միշտ մոմ կը վառենք սրբանկարներուն առջեւ: Այս սովորութիւնը մեր քով շատ տարածուած է եւ կու գայ դարերու խորքերէն:

Աստուծոյ տան մէջ ճրագ կամ մոմ վառելու աւանդութիւնը կու գայ Հին Ուխտի ժամանակներէն ի վեր: Աստուած ինքը Մովսէսի միջոցաւ ժողովուրդին պատփրեց որ ձիթենիի անարատ, զուլալ ձէթ բերուն լոյս վառելու համար, որպէսզի մշտավառ ճրագ մը գտնուի վկայութեան խորանին վրայ: (Ելք ԺԷ 20-21): Սուրբ գիրքը կ'ըսէ նաեւ "Սողոմոն արքան պատրաստել տուաւ Տիրոջ Տան ամբողջ սպասները, ոսկեայ մոմակալները, ճրագակալները, մոմ կտրելու մկրատները": Գ Թագ. 7.49:

Յետագային երբ քրիստոնէութիւնը հաստատուեցաւ աշխարհի մէջ, նորահաստատ քրիստոնէական Եկեղեցիին մէջ եւս, մոմը պահեց իր կիրառական եւ ծիսական նշանակութիւնը: Պետք է ըսել որ մոմը եւ ճրագը սկիզբէն նոյն նշանակութեամբ օգտագործուած են եւ ունեցեր են միեւնոյն հոգեւոր եւ նուիրական իմաստը, որու շնորհիւ Եկեղեցին մինչեւ օրս պահպանած է ճրագ վառելու աւանդութիւնը:

Հին ժամանակներուն, աւելի քան երեք դարեր տեւած, հեթանոսներու գործադրած հալածանքներուն պատճառով, քրիստոնէական պաշտամունքները կը կատարուէին գիշերով, ստորերկրեայ գաղտնի աղօթատեղիներու եւ մատուռներու մէջ, ուր բնականաբար մոմեր եւ կանթեղներ կը վառէին այդ վայրերը լուսաւորելու համար: Այդպէս ալ յետագային, եկեղեցւոյ ներսիդին լուսաւորելու, արարողութեան շքեղութիւն եւ տօնականութեան հանգամանք տալու համար մոմավառութիւնը մնաց որպէս ծեսի կարեւոր բաղադրիչ մաս: Սակայն մոմավառութեան աւանդութեան պատճառը միայն լոյս տալու պարագան չէր: Այդ սովորութիւնը թէ Հին Ուխտի եւ թէ Նոր Ուխտի ժամանակ ունի նաեւ խորհրդաբանական ներքին իմաստ:

Մոմի եւ մոմավառութեան խորհուրդները ըստ Սուրբ Գրքին եւ եկեղեցւոյ հայրերուն

Վառուող մոմը առաջին հերթին կը խորհրդանշէ Քրիստոսը, ապա քրիստոնէաները. "Ես եմ աշխարհի լոյսը. ով իմ ետեւէս կու գայ խաւարի մէջ չի քալեր, այլ կ'ընդունի կենաց լոյսը": Յովհ. 8.12

"Դուք էք աշխարհի լոյսը՝ եւ ճրագը վառելով կաթսայի տակ չեն դներ, այլ աշտանակի վրայ , եւ ան կը լուսաւորէ բոլոր անոնք որ տան մէջ կը գտնուին: Թող այդպէս փայլի ձեր լոյսը մարդկանց դիմաց որ անոնք տեսնեն ձեր բարի գործերը եւ փառաւորեն ձեր Հայրը որ երկնքի մէջ է": Մատթ. 5.14-16

Յիսուսի բերած աստուածային լոյսը Սուրբ Հոգիի միջոցաւ փոխանցուեցաւ առաքեալներուն, որոնք նոյն Հոգի գօրութեամբ եւ գործակցութեամբ գայն տարածեցին ամբողջ աշխարհին եւ այդ մոմերուն կրակը չի մարեցաւ եւ "վառուելով" տարածուեցաւ եւ կը շարունակէ տարածուիլ աշխարհին մէջ: Ուրեմն մեր ձեռքի մէջ վառող մոմը կը նշանակէ հաւատքի լոյսը, Քրիստոսի Պատուրանները աչքի առջեւ ունենալը եւ անոնց կատարումը:

Ինչպես մոմը առանց կրակի մեռած է և խաւար է, նոյնպէս "Չաւատքը առանց գործի մեռած է":
Յակ. 2.26

Ինչպէս մոմը է կրակը առանց պատրոյգի չեն վառիր, նոյնպէս ալ հաւատքը է գործը առանց
նպատակի անպետք են: Ան որ հաւատք ունենայ է Աստուծոյ սիրոյն բարի գործ մը կատարէ,
ան է որ արժանի է Աստուծոյ արքայութեան եւ իր մեղքերու թողութեան:

Վառուող մոմը կը խորհրդանշէ մեր **աղօթքն ու ողորմութիւնը**, որ մեր իսկ ձեռքով կ'ընծայենք
Քրիստոսին: Ան նաեւ մեր անձի փրկութեան խորհրդանշանն է, որովհետեւ մոմը ինքը հուր է ,
մոմանիւթ է պատրոյգ. նոյնպէս մեր փրկութեան համար ալ երեք բան կարելի է:

Նախ՝ ճշմարիտ հաւատք, որ կը խորհրդանշէ **մոմանիւթը**:

Երկրորդ՝ բարի գործեր՝ որ կը խորհրդանշեն **հուրը**:

Երրորդ՝ ճշմարիտ եւ սուրբ նպատակ՝ որ կը խորհրդանշէ **պատրոյգը**, եւ այն՝ որ ամեն բարի
գործ Աստուծոյ սիրոյն համար է որ կ'ընենք եւ ոչ թէ ի ցոյց մարդկանց: Եւ ինչպէս որ մարած
մոմը կը տարբերի վառող մոմէն, այդպէս ալ կենդանի հաւատքը կը տարբերի մեռած
հաւատքէն: Որովհետեւ վառող մոմէն լոյս կ'ելլէ, իսկ մարած մոմէն սեւ ծուխ: Այսպէս ալ
կենդանի հաւատքէն կը փխի ճշմարտութեան լոյսը, լուսաւորելով մարդոց ճանապարհը:

**Ուրեմն, ինչպէս մոմի նիւթը եւ իւղը միշտ վառ կը պահեն լոյսը, այդպէս ալ առաքիւնի գործերը
կ'օգնեն եւ միշտ վառ կը պահեն աղօթքներու լոյսը, իսկ անիրաւութեան եւ մեղքերու գործերը
միշտ մարմնին հակառակ են եւ կը մարեն աղօթքներուն լոյսը:**

Եւ ամենէն կարելորդ. մոմը, Աստուծոյ եւ Իր սուրբերուն հանդէպ, մեր սիրոյ նշանակն է: Մոմը որ
կը վառենք, կը խորհրդանշէ այն մեծագոյն եւ կատարեալ գոհաբերութիւնը, որ մարդ արարածը
պետք է մատուցէ իր Արարիչին: Այսինքն Աստուծոյ նուիրաբերէ իր սեփական անձը՝ իր
ինքնիշխան կամքը յօժարութեամբ ստորադասելով ու ենթարկելով Աստուծոյ կամքին:

- - - - -

Եկեղեցին իր բոլոր պաշտամունքները կը կատարէ խնկարկումով եւ մոմավառութեամբ: Տանք
քանի մը օրինակներ.

Ծիսական արարողութիւններու ժամանակ քահանային կամ Աւետարան ընթերցող
սարկաւազին երկու կողմերը կը կանգնին երկու մոմակիրներ. անոնք կը խորհրդանշեն Յիսուսի
Յարութիւնը անտող երկու լուսաւոր հրեշտակները, "որոնք նստած էին, հոն ուր Յիսուսի
մարմինը դրուած էր " մէկը՝ սնարին , միւսը՝ ոտքերուն մօտ": Յովհ. Ի 12

Սուրբ Ծննդեան եւ Չատկուան ճրագալոյցներուն, Տիառնդառաջի երեկոյեան
հաւատացեալները իրենց ձեռքերուն մէջ մոմեր կ'ունենան, որոնք հետեւեալ խորհուրդները կը
նշանակեն.

Ճրագալոյցի գիշերուայ ժամերուն տօնը բազմաթիւ վառած լոյսերով եւ մոմերով կը կատարենք,
որովհետեւ այս տօնին Տէրը Քրիստոսն է՝ երկնաւոր լոյսը, եւ հարկ է որ Լոյսի տօնը լոյսով
կատարուի:

Մոմի լոյսը կը խորհրդանշէ այն աստղը, որ առաջնորդեց մոզերուն եւ կանգնեցաւ հոն ուր
Մանուկը կը գտնուէր: Այդ պատճառով այդ օրը երեկոյեան վառած մոմերով եկեղեցի կը
մտնենք:

Տեառնդառաջին մեր ձեռքին մէջ մոմ կ'ունենանք , որովհետեւ ինչպէս սուրբ Կոյսը, Յովսէփը,
Աննա մարգարեուհին եւ Սիմէոն Ծերունին իրենց ձեռքերուն մէջ Յիսուսը ունէին, այնպէս ալ

մենք՝ մոմ: Քանի որ մոմը ինքնին հուր է, մոմանիւթ եւ պատրոյգ, այնպէս ալ Քրիստոս երեք իրողութիւն է՝

Աստուածութիւնը՝ իբրեւ հուր,
անապական մարմինը՝ որպէս մոմ
Յոգին՝ որպէս պատրոյգ,

որմով լուսաւորեցին բոլոր արարածները:

Սիմէոն ծերունին կ'ըսէ "Լոյս, որ յայտնութիւն կ'ըլլայ բոլոր հեթանոսներուն համար ": Դուկ. 2.25-32

Ուշագրաւ փաստ մըն է որ ժամանակին մեր Եկեղեցւոյ մէջ եղած է մոմի եւ կրակի օրինութեան կարգ. այդ կարգը կը կատարուէր Տեառնդառաջի եւ Չատկուան ճրագալոյցի երեկոյեան:

Արագ Շաբփուան Աւագ Երեքշաբթիին մեր ձեռքերուն մէջ վառուող մոմը կը խորհրդանշէ տասը կոյսերը, (Մատթ. 25.1-13): Կոյսերը քրիստոնեաներուն օրինակն են՝ հինգը իմաստուն, հինգը՝ յիմար:

Իմաստուն են անոնք, որոնք կ'ապրին աղօթքով, պահքով եւ ողորմութեամբ եւ կը սպասեն Յիսուսի Երկրորդ Գալուստին:

Ինչպէս Աւետարանը կ'ըսէ՝ " Կէս գիշերին ձայն մը լսուեցաւ. ահա փեսան կու գայ", յիմար կոյսերը, որոնք իրենց լապտերները մարած էին, այսինքն հաւատքի գործեր չունէին, պիտի մնային խաւարի մէջ, իսկ իմաստուն կոյսերը, որոնք իրենց լապտերները վառած պահեր էին, Փեսային հետ պիտի մտնէին Լոյսի սրահը՝ Երկնքի Արքայութիւնը:

Այսպիսով, Եկեղեցւոյ մէջ մոմ վառելով հաւատացեալը կ'արտայայտէ իր հաւատքը, յոյսն ու սերը առ Աստուած: Կը խնդրէ որ ինչպէս այս փոքրիկ մոմը իր լոյսով հալածեց տաճառին ներսի խաւարը, այնպէս ալ Լոյս Քրիստոսը թող հալածէ մեր՝ հաւատացեալներուս մեղքերու խաւարը: Եւ շատ կարելոր է, որ երբ Եկեղեցւոյ մէջ մոմ կը վառենք, այդ մէկը չվերածենք ինքնանապատակ եւ մեքենայական գործողութեան մը, այլ միշտ մտաբերենք որ մոմը եւ մոմավառութիւնը ունին ներքին իմաստ եւ իրենց խորհուրդով մեզ կը յիշեցնեն աստուածապաշտական ու փրկագործական կեանք պարգեւող իրողութիւններու մասին:

ԱՆՏԵՍԱՆԵԼԻՆ ՏԵՍԱՆԵԼԻՆ ՄԷՋ

Սրբանկարներու մասին

Սրբանկարները՝ icones, զարգացման բարդ եւ անհարթ ճամբայ կտրած են: Որպէս Քրիստոնեական հոգեւոր մշակոյթի եւ գեղարուեստական մտածողութեան արդիւնք, ան զարգացած է պաշտամունքի կանոններուն զուգընթաց, համապատասխանելով վարդապետական եւ դաւանաբանական կարեւորագոյն ձեւակերպումներուն: Այդ ճամբուն վրայ յստակացեր եւ բիրեղացեր է նաեւ սրբապատկերներու խորհուրդը եւ զանոնք ընկալելու կերպը:

Մեր Եկեղեցւոյ մէջ, առաջին հերթին, սրբապատկերները այն գեղանկարներն են որոնք կը զարդարեն սուրբ Սեղանը, Եկեղեցւոյ դասը, տաճառի եւ գաւիթի որմերն ու սիւները: Այդ պատկերներուն առջեւ է որ մենք սովորաբար մոմ կը վառենք եւ կ'աղօթենք: Մենք բոլորս գրեթէ ամէն օր կը տեսնենք այդ նկարները, սակայն մեզմէ քիչերն են որ որ գիտեն այդ պատկերներու իրական նշանակութիւնը ու իմաստը, իսկ շատերու պատկերացումով անոնք միայն քրիստոնեական թեմաներով կատարուած նկարներ են, որոնք իրենց ներկայութեամբ պարզապէս կը գեղեցկացնեն Եկեղեցւոյ ներքին տարածքը: Սակայն ասիկա մակերեսային գիտելիք մըն է եւ չ'արտայայտեր սրբապատկերներու իրական դերը եւ անոնց իրական նշանակութիւնը Եկեղեցւոյ խորհրդական կեանքին մէջ:

Որպեսզի ճիշդ հասկցուի սրբապատկերներու երեւոյթը, համառօտ կերպով կը ներկայացնենք այն հիմնական տուեալները, որ պէտք է գիտնայ իւրաքանչիւր Հայ Առաքելական Եկեղեցւոյ հաւատացեալ զաւակ:

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՍՐԲԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Սրբապատկերներն ու անոնց գործածութիւնը եկեղեցւոյ մէջ այնքան հին է որքան ինքը եկեղեցին: Ս. Բարսեղ Կեսարացիի (4րդ դար) վկայութեամբ Յիսուս Քրիստոսի, Աստուածամօր եւ սուրբերու պատկերներու գոյութիւնը եկեղեցւոյ մէջ աւանդական է եւ օրհնուած առաքեալներու կողմէ:

Ըստ եկեղեցւոյ սրբազան աւանդութեան առաջին սրբապատկերները եղած են Յիսուսի Դաստարակը եւ Աստուածամօր պատկերները: Մեզի համար նշանակալից եւ խորհրդանշական է որ այս երկու նուիրական պատկերները ժամանակին պատկանած են Հայ Եկեղեցւոյ:

Սրբապատկերներու հնութիւնը կը հաստատուի նաեւ հնագիական պեղումներու արդիւնքներով: Պոմպեյի եւ Հերգիլանումի պեղումներու ժամանակ յայտնաբերուած են սրբապատկերներ: Այդ քաղաքները կործանուած են 79 թուականին եւ գտնուած կտորները կու տան այն փաստը որ սրբապատկերները եկեղեցւոյ մէջ տեղ գտած են առաքելական ժամանակներէն իսկ: Յետագային, առաքեալներու գործի անմիջական շարունակողները ` Ընդհանրական Եկեղեցւոյ սուրբ հայրերը գիտակցեր եւ քաջալերած են եկեղեցւոյ մէջ այդ սրբանկարներու անհրաժեշտութիւնը, որպէս քրիստոնեայի ներքին աղօթական վիճակի եւ անոր բարոյական նկարագրի կատարելագործման նպաստող պայման: Անոնք յատուկ կերպով կը վկայեն այն օգուտներուն մասին որ սրբանկարները կու տան քրիստոնեային, խրատելով, յորդորելով, ուղղելով եւ լուսաւորելով:

Սրբապատկերը, ըստ սուրբ Բարսեղ Կեսարացիին, սրբապատկերը կ'օգնէ քարոզիչին որ ան իր խօսքը աւելի արտայատիչ եւ տպաւորիչ դարձնէ: Ս. Յովհաննէս Ոսկեբերանը (4րդ դար) կ'եզրակացնէ որ այդ պատկերները քրիստոնեային հոգեւոր մխիթարութիւն կը պարգեւեն: Սրբապատկերները խանդաղատանքի արցունքներ կը յառաջացնեն: Օրինակ՝ ս. Գրիգոր Նուսացի (4րդ դար) առանց արցունքի չէր կրնար դիտել Իսահակի զոհաբերութեան պատկերը: Խիստ կարեւոր է նաեւ նկարներուն խրատական դերակատարութիւնը. անոնք զգաստութեան, ապաշխարութեան կոչեր են մեզի ուղղուած: Այս առումով յատկանշական են նաեւ ս. Գրիգոր Աստուածաբանին (4րդ դար) նկատումները սրբապատկերին խրատող եւ քաջալերող նշանակութեան մասին: Սուրբ հայրերը կը նշեն նաեւ սրբապատկերի ուսուցանող յատկութեան մասին: Պատկերաւոր լոզուով եւ տեսանելի կերպով ան մեզի կը փոխանցէ Սուրբ Գիրքի պատգամներն ու պատմութիւնները:

ՍՐԲԱՊԱՏԿԵՐԻՆ ԽՈՐՀՈՒՐԸ

Սրբապատկերի մասին Ընդհանրական Եկեղեցւոյ հայրերուն յայտնած տեսակետները յետագային հիմք դարձան, որու վրայ բարձրացաւ անոր աստուածաբանութիւնը: Ըստ անոր, սրբապատկերը եկեղեցւոյ եւ եկեղեցական ծիսակարգի անբաժանելի մասն է: Պաշտամունքի ընթացքին օգտագործելի կարեւորագոյն առարկան է, որովհետեւ այդ նկարով կարելի կ'ըլլայ արտայայտել Յիսուսի մարմնաւորած անճառելի իրողութիւնը : Աստուած իր էութեամբ Հոգի է, այսինքն կարելի չէ զինք նկարագրել, սակայն երբ մարմին կ'առնէ եւ իրեն կը միացնէ մարդկային բնութիւնը, կը ստեղծուի նիւթական կերպար մը որ կարելի կ'ըլլայ ներկայացնել նկարով : Այսինքն հոգեւոր էութիւնը կ'արտայատուի զգայական կերպարով եւ միջոցով: Հետեւաբար սրբապատկերը յայտնութեան հանգամանք ունի, քանի որ Սուրբ Գիրքը մեզի կը հաղորդուի կերպարուեստի լեզուով, իսկ պատկերի միջոցաւ մեզի կը բացայայտուին մաքուր եւ միայն մտքով հասանելի աստուածային իրականութեան խորհուրդները: Սրբապատկերը

դիտելով, մեր միտքը կը բարձրանայ դեպի հոգեւոր հայեացք: Պատկերը տեսնելով մենք մտովի կը դիմենք պատկերուած տիպարին: Ատիկա կը կատարուի սուրբ Յոզիկի ներգործութեամբ, եւ պատկերուած տիպարով Աստուծոյ շնորհքը, որ այդ պատկերին մէջ է, կ'անցնի մեզի: Այդ պատճառով է որ մենք պետք է հաւատքով, երկիւղածութեամբ եւ երկրպագութեամբ մօտենանք սրբապատկերին եւ մեր աղօթքն ու խնդրանքը ուղղենք Աստուծոյ: Այդպէսով կ'րականանայ մեր մերձեցումը նկարուածին հետ: Այս նաեւ այն ծօտուն վկայութիւնն է որ երկրային եկեղեցին մէջ է նաեւ երկնային եկեղեցին եւ անոնց միացման խորհուրդը անքակտելի է: Այսպիսով, սրբապատկերի գլխաւոր տերը քրիստոնէան դեպի աստուածային սրբութեան հրահիրելն է: Պետք է սակայն մէկ բան յստակ գիտնանք որ սրբանկարին առջեւ մեր աղօթքը ուղղուած է առ Աստուած ոչ թէ այն պատկերին որ հոն գծուած է:

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՍՐԲԱՊԱՏԿԵՐԸ

Սկիզբէն հայ եկեղեցին եղած է պատկերագար:

Հայ եկեղեցական արուեստին մէջ սրբապատկերները հիմնական գործածութիւն եղած են թէ առանձին պատկերներով եւ թէ որմնանկարչութեան, մանրանկարչութեան, քանդակագործութեան մէջ: Մեր եկեղեցւոյ հայրերը միշտ արտայայտել են իրենց դրական վերաբերմունքը սրբանկարներու հանդէպ: Այս առումով կարելի է նաեւ ասել, որ ս. Վրթանէս Զեթրոյի (Է դար), ս. Յովհաննէս Օձնեցիի 9 Ը դար), ս. Յովհաննէս Սարկաւազի եւ ս. Ներսէս Շնորհալիի (ԺԲ դար) յայտնած տեսակետները: Անոնք ընդհանուր առմամբ համակարծիք են սրբանկարները բնորոշող քրիստոնէական ընդհանրական գաղափարներուն, սակայն կան նաեւ որոշ տարբերութիւններ.

ա. մեր եկեղեցւոյ մէջ սրբապատկերները կ'օգտագործուին աւանդաբար, առանց դաւանաբանական բանաձեւումի:

բ. Յիսուս Զրիստոսի, Խաչի, Աստուածամօր պատկերները երկրպագելի են, իսկ սուրբերու պատկերները միայն պատուելի կամ մեծարելի:

գ. Մեր եկեղեցւոյ մէջ սրբապատկերը գործածելի կը դառնայ միայն յատուկ կարգով օրհնուելէ եւ օծուելէ ետք:

"Տեսանելին անտեսանելիին մէջ", յաճախ այսպէս կը բնորոշենք սրբապատկեր հասկացողութիւնը: Եւ այս բնորոշումը լիովին կը համապատասխանէ իրականութեան, քանի ՝ " Ես կ'ընթանայի դեպի առաջ, որպէսզի տեսնեմ եւ ճանչնամ Աստուծոյ: Ուստի ես կտրուեցայ նիւթէն եւ մարմնական աշխարհէն: Ես հաւաքուեցայ ինքս իմ մէջ որքան որ կրնայի եւ բարձրացայ լերան գագաթը: Բայց երբ աչքերոս բացի Աստուած տեսայ միայն ետեւէն որ Բանի մարդեղութեամբ մարմնաւորուած էր մեր փրկութեան համար: Ես չի կրցայ տեսնել Ամենասուրբ Գերբնութիւնը ինքն իրմով՝ Սուրբ Երրորդութեամբ ճանչցուող: Քանի որ ես չէի կրնար տեսնել այն ինչ որ հրեշտակներով ծածկուած էր, այլ տեսայ միայն այն՝ այսինքն *Արարածին մէջ տեսանելի Աստուածային Հրաշակերպութիւնը* որ դեպի մեզ կու գար" (ս. Գրիգոր Աստուածաբան):